

ՀՈԳԵՒՐԱԿԱՆԱՑ ՄԻՕՐԵԱՅ ԺՈՂՈՎ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ՄԷՋ

Արեւմտեան Թեմի Հոգեւորականաց Միօրեայ ժողովը Առաջնորդարանի մէջ գումարուեցաւ Երեքշաբթի, Օգոստոս 17ին, 2010 Թեմակալ Առաջնորդ Գերշ. Ս. Յովնան Արք. Տէրտէրեանի նախագահութեամբ, Ատենադարութեամբ Արժ. Ս. Յովսէփ Աւագ Քինյ. Յակոբեանի, մասնակցութեամբ Թեմիս հոգեւորականներու եւ Քահանայութեան Թեկնածու Սարկաւազներու՝ շուրջ 30 հոգի:

Առաւօտեան ժամը 10:00ին Սրբազան Հօր գլխաւորութեամբ, հոգեւորականները միասնաբար ժամերգութիւն կատարեցին Առաջնորդարանիստ Մայր Եկեղեցւոյ մէջ, որու ընթացքին հոգեւոր պատգամը տուաւ Օգլընտի Սուրբ Վարդան Հայց. Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ՝ Արժ. Ս. Յովէլ Քինյ. Օհանեան: Տէր Հայրը իր պատգամին մէջ շեշտեց եկեղեցին եւ Թեմը զօրացնելու եւ հաւատացեալներուն հոգեւոր կարիքներուն գոհացում տալու համար միասնական ջանքերով ծառայելու եւ Սուրբ Հոգիի իմաստութեամբ առաջնորդելու մեր հաւատացեալ ժողովուրդը եւ յատկապէս երիտասարդութիւնը:

ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏ

Ժամերգութեան աւարտին, Առաջնորդարանի Արմէն Համբար Դահլիճին մէջ գումարուեցաւ ժողովին առաջին նիստը՝ նախագահութեամբ Առաջնորդ Սրբազան Հօր, որ ի սրտէ բարի գալուստ մաղթեց հոգեւորականներուն եւ իր ուրախութիւնը յայտնեց, որ մեծ թիւով եկեղեցականներ ներկայ էին: Այս ժողովը գլխաւորաբար կը գումարուէր Ն.Ա.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի Արեւմտեան Թեմին շնորհելիք օրհնաբեր այցելութեան եւ Առաջնորդարանիստ Մայր Եկեղեցւոյ Օծման առթիւ:

Սրբազան Հայրը ներկայացուց իր ամփոփ զեկոյցը, իր գրած «Հովուական Նամակ»ը, ուր կ'անդրադարձնար զանազան նիւթերու, որոնք առընչուած են հովուական, վարչական, ծիսական եւ ծառայութեան ա՛յլ մարզերու: Ապա գլխաւորաբար խօսեցաւ Վեհափառ Հայրապետի այցելութեան եւ Առաջնորդարանիստ Մայր Եկեղեցւոյ Օծման եւ ծրագրուած հանդիսութիւններուն մասին: Սրբազան Հայրը հոգեւորականներուն կարգ մը պարտականութիւններ յանձնեց, ապա հետեւեալ ժամանակացոյցի հիման վրայ տեղեկութիւններ հաղորդեց:

- Սեպտեմբեր 11ի շաբաթավերջին Նորին Սրբութիւնը եւ իր շքախումբին մաս կազմող Գերշ. Ս. Առաքել Եպս. Քարամեան, Գերշ. Ս. Մարկոս Եպս. Յովհաննիսեան, Հոգշ. Ս. Վարդան Աբեղայ Նաւասարդեան, Հոգշ. Ս. Շահէ Աբեղայ Անանեան, Հոգշ. Ս. Անանիա Աբեղայ Ծատուրեան (Գաւազանակիր), Արժ. Ս. Կորիճ Քինյ. Տէվէճեան, Տիկին Մանեա Ղազարեան եւ Տիար Սուրէն Տէր Գրիգորեան պիտի ժամանեն Լոս Անճելըսի օղակայան եւ սիրալիր կերպով պիտի դիմաւորուին Առաջնորդ Սրբազան Հօր եւ պատասխանատուներու կողմէ:

- Սեպտեմբեր 11ի առաւօտեան ժամը 11:00ին Առաջնորդարանի մէջ տեղի պիտի ունենայ հիւրասիրութիւն հոգեւորականներու եւ Թեմական Խորհուրդի հետ: Իսկ կէսօրէ յետոյ ժամը 1:30-2:30 Նորին Սրբութիւնը Առաջնորդարանի մէջ հանդիպում-հիւրասիրութիւն պիտի ունենայ Քոյր Եկեղեցիներու եւ Միջ-Եկեղեցական Յարաբերութեան Ներկայացուցիչներու եւ պետական պաշտօնեաներու հետ:

- Կէսօրէ յետոյ ժամը 3:00ին պիտի սկսի Առաջնորդարանիստ Մայր Եկեղեցւոյ Օծման Արարողութիւնը, որուն պիտի մասնակցին յատկապէս տարբեր Թեմերէն հրաւիրուած բարձրաստիճան հայ հիւր հոգեւորականեր: Ներկայ պիտի գտնուին Թեմիս հոգեւորականները, ինչպէս նաեւ զանազան յարանուանութեանց հոգեւորական ներկայացուցիչները եւ պետական պաշտօնեաներ:

- Օծման աւարտին, Առաջնորդարանի Գալայճեան Սրահին մէջ տեղի պիտի ունենայ ընդունելութիւն հոգեւորականներու, Թեմական Խորհուրդի, Մայր Եկեղեցւոյ Կնքահայրերու, Բարերարներու, Շինութեան եւ Հանգանակիչ Յանձնախումբերու հետ՝ հիւրընկալութեամբ Տէր եւ Տիկին Արմէն եւ Նորա Համբարի:

- Կիրակի, Սեպտեմբեր 12ին, Խաչվերացի Տօնին օրը, առաւօտեան ժամը 10:30ին Հայրապետական Սուրբ Պատարագ պիտի մատուցուի Նորած Սրբոց Ղեւոնդեանց Մայր Եկեղեցւոյ մէջ: Սուրբ Պատարագի աւարտին Նորին Սրբութիւնը պիտի օրհնէ եկեղեցւոյ շուրջ 150 «*վոքրիկ կնքահայրեր*»ը: Իսկ երեկոյեան ժամը 5:00ին Պաշտօնական ճաշկերոյթ եւ արժանավայել յայտագիր տեղի պիտի ունենայ Universal Hilton Պանդոկին մէջ:

Ապա, Սրբազան Հայրը ուրախութեամբ յայտարարեց, թէ Անապատի Հայց. Եկեղեցւոյ, Ռէնչօ Միրաժի Սուրբ Կարապետ Հայց. Եկեղեցւոյ Նաւակատիքի Արարողութիւնը պիտի կատարուի Հոկտեմ-

բեր 8ի երեկոյեան եւ յաջորդ օրը տեղի պիտի ունենայ հանդիսութիւն: Իսկ Սիաթըլի Դայց. եկեղեցւոյ կառուցումը պիտի աւարտի այս տարուան Դեկտեմբերին եւ օծումը տեղի պիտի ունենայ 2011ի առաջին ամիսներուն:

ԵՐԿՐՈՐԴ ՆԻՍ

Կէսօրուան ճաշի դադարէն ետք, Սրբազան Դօր նախագահութեամբ ժողովին Երկրորդ Նիստը սկսաւ ժամը 1:30ին:

Փասատինայի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Դայց. եկեղեցւոյ Դոգետոր Դովիւ՝ Արժ. Տ. Սարգիս Աւագ Քինյ. Փեթոյեան ներկայացուց աշխատանք մը, որուն նիւթն էր՝ ինչպէս բարգաւաճել եւ զօրացնել եկեղեցւոյ եւ համայնքին կեանքը: Տէր Դայրը շեշտեց հետեւեալ կէտերը.- Ապահովութիւն, Յարմարութիւններ, Պաշտամունք, Ընկերային Դաւաքներ, Դաղորդակցութիւն Դաւատացեալներուն հետ, Կրթութիւն, Ծուխի Դպրոց, եթէ ունին, Երիտասարդութիւն եւ Տնտեսական Կացութիւն: Այս աշխատանքի մանրամասնութիւններուն մասին Տէր Դայրը տեղեկութիւններ եւ լուսաբանութիւններ տուաւ, ապա պատասխանեց տրուած հարցումներուն:

Դոգետորականներուն խորհրդակցութեան նիւթերը եղան նաեւ եկեղեցւոյ տրատու անդամներուն թիւը աւելցնելը, ինչպէս նաեւ անհրաժեշտութիւնը Սուրբ Գիրքի սերտողութիւն ունենալու: Նկատի ունենալով, որ ներկայացուած աշխատանքը շատ ընդարձակ էր, որոշուեցաւ Դոկտեմբեր 8ին Ռէնչօ Միրաժի մէջ ծրագրուած միօրեայ հաւաքի ընթացքին նկատի առնել զանոնք հանգամանօրէն:

Սրբազան Դայրը ուրախութեամբ հոգետորականներուն ներկայացուց Վենթուրա Գաւառի Դայց. եկեղեցւոյ Դոգետոր Դովիւ՝ Արժ. Տ. Յարութիւն Քինյ. Թաշճեանը, որ պարագաներու բերումով վեց ամիս Փարիզ մնալէ յետոյ, ընտանեօք փոխադրուած էր իր Ծուխը եւ վերսկսած իր հովուական պարտականութիւններուն:

Սրբազան Դայրը նոյնպէս ներկայացուց Քահանայութեան Թեկնածու Սարկաւագները՝ Բրշ. Յովնան Սրկ. Վարդանեանը, Բրշ. Մէթիու Սրկ. Աշը, Բրշ. Մկրտիչ Սրկ. Քսաչիքեանը եւ Բրշ. Սարգիս Սրկ. Էյլէնճեանը, որոնք իրենց Աստուածաբանական բարձրագոյն ուսումը կը շարունակեն եւ շրջանաւարտ ըլլալէ ետք պատրաստ պիտի ըլլան Քահանայական Ձեռնադրութեան: Իսկ Քահանայութեան Թեկնածու Բրշ. Ռազմիկ Սրկ. Սարգիսեան մօտ ապագային իր կնոջ հետ պիտի ժամանէ Լոս Անճելըս, իր ուսումը շարունակելու համար:

Սրբազան Դայրը տեղեկութիւններ տուաւ կարգ մը Ծուխերու եւ կատարած նոր պաշտօններու նշանակումներու մասին: Իսկ Առաջնորդական Ընդհանուր Փոխանորդ՝ Դոգշ. Տ. Տաճատ Ծ. Վրդ. Եարտընեան հաղորդեց, որ Խորհրդակատարութիւններու նոր գիրքերը եւ Յատուկ Արարողակարգերու պատրաստութիւնը՝ Խաղողօրհնէք, Անդաստան, Տնօրհնէք, եւ այլն, ընթացքի մէջ են եւ շուտով պատրաստ պիտի ըլլան հրատարակութեան: Առաջնորդարանի եկեղեցական երաժշտութեան Վարիչ՝ Արժ. Տ. Նարեկ Աւագ Քինյ. Մատարեան պիտի շարունակէ այցելել Ծուխերը, որպէսզի փորձեր կատարէ երգչախումբերու հետ: Սրբազան Դօր եզրափակիչ խօսքերէն ետք, իր գլխաւորութեամբ հոգետորականները Մայր եկեղեցւոյ մէջ կատարեցին Երեկոյեան Ժամերգութիւն եւ հոգեպէս զօրացած վերադարձան իրենց Ծուխերը: